

Ս. Ր Ս Ն Ե Զ Ո Ղ Զ Ո Ն Ն Ի Ս Յ Ա Ն

ՈՒՍԱԲԱՑԻ ԻՐԻԿԱ

ԿՆԵՋՈՏԵԿ
ԻՆՏԻՏՈՒՏԱ
ՎՕՏԱՎՈՐՈՒՄ
Լադենիա Մաուկ
ՍՍՐ



891.99

2-85

Ս. Ր Ս Ն Ե Զ Ո Ղ Զ Ո Ն Ն Ի Ս Յ Ա Ն 1985

19 NOV 2011

85-01
808

Ս Ր Ս Ե Ն Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Յ Ա Ն

891.09
2-85

ՀՈՒՍԱՐԱՑԻ ԼԻՐԻԿԱ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Ազով-Սեվծովյան
Ֆերկրային Հրատարակչություն
1935

13 JUN 2013

37575



56405-66



Զու

«Չեղյուսկինի» արշավամբի
վրկարար ասվանորդներին:

Մեր ծով, անալի, լայն աշխարհից,
Հանքի, հողի պոետներից,
Մեծ Միության հերոսներին՝
Բևեռային արձիվներին,
Նրանց, վոր ան ու մահ չունեն,
Նրանց վոր լեռ սրտեր ունեն, —

Նրանց գործին հերոսական,
Նրանց փառքին անմահական՝
Գիրքս վորպես շքանշան,
Թեկուզ նվեր մի աննշան,
Թող վոր նրանց նվեր լինի՝
Պայքարի յերգ, կարմիր գլինի:

ԵՊԻԳՐԱՍ

Գարնան պես կանաչ, վարդերի պես բայ,
Այս ծաղկածիծաղ նոր կյանքի ծերին,
Յեռ իմ յերգերի բեռը շալակած,
Բռնել եմ ահա մաքառման ուղին:

Ինչպես ովկիանի մակնթացություն,
Աճում եմ հիմա ալիք առ ալիք, —
Այս ճամբան հիմա փոփել ե իմ դեմ,
Դեպի արևկա, լուսաշող գալիք:

ԲԵՎԵՌԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Ձեզյուսակինի պետ՝ Շմիլտին.

Նա անցել է ծովեր անափ
Յեզվ վարել է նավեր անթիվ, —
Նա տեսել է տանջանք ու մահ
Յեզվ պայքարող անդուլ մարդիկ:

Յերբ յեղել է օրը մռայլ
Յեզվ հողմերն են ծովը քանդել,
Նա յեղել է միշտ անայլայլ,
Հողմն է նրան հնազանդվել:

Նա տեսել է փոթորիկներ՝ —
Զրի տարերքը կատաղի, —
Նավորդել է անանց ջրեր,
Բայց վոչ իզուր ու անտեղի:

Նա անցել է ովկիանոսներ՝
Սառցապատյան ու ահուելի, —
Միշտ վարել է նավն իբր առաջ,
Վոր հրամանն է մեր մեծ դարի:

Յերբ յեղել է մութ ու խավար,
Սառցասարերն են յելել մարտի,
Նա կռիվ է մղել համառ,
Վոր այդ ահավոր տարերքը հաղթի:

Նա անցել է ովկիանոսներ,
Սառցապատյան ու ահուելի, —
Միշտ վարել է նավն իբր առաջ,
Վոր հրամանն է մեր մեծ դարի:

ՅԵՐԳ ՊՈՂՊԱՏԵ ԹՈՉՈՒՆՆԵՐԻՆ

Սովետական հողի վրա,
Լայն ծովերի կապտի վրա,
Վորպես շաչող ահեղ քամի,
Նրանց յերգն ե զնգում հիմի:

Թեկուզ լինի բորան ու բուք
Յեվ անձրեք թափվի վառարը, —
Նրանք կառնեն անվախ ընթացք,
Թեկուզ լինի մուխ ու խավար:

Յեվ թշնամին, յեթե մեկ ուր
Փորձի սողալ մեր սահմանից —
Նրանք կրակ կթափեն բորբ,
Նրանց վրա ծով յերկնքից:

Սովետական հողի վրա,
Լայն ծովերի կապտի վրա,
Վորպես շաչող ահեղ քամի,
Նրանց յերգն ե զնգում հիմի:

ՎԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԼԻՐԻԿԱ

ՔՆԱՐԵՐԳՈՒ ԱՅՑ

Ճամբաներն այն ծանոթ
Բորիկ վոտքերիս,
Են ծիրանի ծառը,
Վոր վարդիկս ճղեց,
Են շաֆրան խնձորը,
Են դալար ուռենին,
Սայրենին փշոտ,
Ո՛ւր են... ել չ կան:

Են իրար խճճված
Թթենու ծառուար,
Են հնձանը՝ կարին
Չոր թուխը փռած. —
Են հանդիզանի
Ծերին պաղած
Թզուկ դեղձենին,
Ո՞ւր են, ել... չկան:

Են հացենու քոքին
Մեր փորած հավուղը,
Են դամշուտի մեջ
Պահած մեր կուժը,
Են բարձր ու մեծ
Դավրիժ ընկույզը,
Ո՞ւր են, էյ, ո՞ւր են,
Ո՞ւր են... ել չկան:

Ափոյիս անկած
Պսալիկ գերասենին,
Սոպոպիկ Ֆնդուխը,
Տոգած մալաչեն,
Վոր ինձ հետ հասակ
Մանկություն են առել —

Նրանք գիջել են հիսս
Իրենց կյանքը դալուկ,
Մեր ես նոր յերկրի,
Նոր սունկի համար...

Յեզ դողում ե հողը...
Շրճի - շրճիսրցով
Սև քարափը պայթում,
Ժայռերը տենդում են
Դինամիտի ջերմից,
Կարծես հակամարտ են
Յեկել վերջին անգամ,
Դարերի խոր քնից:

— Եյ հէյ, հէյ, դենը,
Դենը, քարն ե գալիս
Վերից, հէյ, Համբարձում,
Չորից դենը փախիբ, —
Ու են լեռան ծերից
Դեպի ձորն ե թռչում
Բարափն են անոելի,
Դինամիտի ջերմից...



56405-66



Ենքան կարոտ քաշած
Սիրոս փրփրում ե —
Խինդը Չանգուի պես
Հեղեղում ե հոգիս. —
Արդյոք ունեցել եմ
Յես այնպես մանկություն,
Ինչպես բարձունքներն
Այժմյական թովքիս:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

Այն զնգզնգուն՝ Չանգուն՝
Վոր վոլտեր ե հաշվում,
Խավարը ցրում ե,
Վո՞նց փոշի չոր...

Արսեմ

ՅԵՐԵՎԱՆ

Վողջճւլն, վողջուլն Յերեվանին,
Վարպետներին քարի, փողու,
Չավողներին, նոր տներին,
Փողոցներին դարդ ու կանաչ,
Տրամվային սովետական,

Այդ մեծ գործի հերոսներին,
Սովետական պոետներին՝
Վողջիչն, վողջիչն:

ՍԵՎԱՆ

Յերազ կամ միֆ, ո՛ր, ցնորք չե,
Իգուր ներբող գովասանք չե,
Վոր այն խոր ձորերի միջում,
Ելեկտրական հողմն ե փչում:

Մխաքն ե այնտեղ սիրով տոկում,
Մարդն ե այնտեղ, ձեռքն ե ճկուն,
Վոր Ձանգուն լուռ յելը յելնի,
Համպը լուսե գյուղը մտնի:

Ռ Ի Մ Ա

1.

Կարոտել եմ քեզ, Ռիմա,
Են կապույտ խալաթին քո, —
Շատ քաղցր ե ինձ համար
Քո խոհերի շեմքը,
Վոր բացվել ե զավոզի համերգի ներքո:

Ռիմա, դու դեռ լվանում ես գինու շիշերը,
«Արարատ»-ն ե քո տունը և դազգյահը քո, —
Ֆին-շամպայնի մղոցն ե քո ուրվա գիրքը,
Յեվ պայքարով լեցուն հաղթանակները մեր:

Կարոտելեմ եմ քեզ, Ռիմա,
Են կապույտ խալաթին քո. —
Շատ քաղցր ե ինձ համար
Քո խոհերի շեմքը,
Վոր բացվել ե զավուզի համերզի ներքո:

Հիմա յես խորհում եմ
Անցյալի մասին,
Յեվ այն՝ թե յե՞րբ մեկ ել
Կլինենք միասին:

Հիմա յես գյուղումն եմ,
Նստած եմ տանը, —
Յեվ կարոտով հիշում
Քո ոթեանը:

Սոսում եմ այնպես,
Կարծես թե լցված եմ,
Կամ զգում եմ սիրելու
Մի հուժկու ցանկություն:

Շղարշում ե հայացքս,
Ռիմա, քո պատկերը,
Վոր այնքան հարազատ
Թ՛վաց իմ հոգուն:

Քո սիրտը լայն ե, Ռիմա, ժպիտոզ քաղցր. —
Ինձ թվում ե, Վոր քո սիրտն այն ե, ինչ Վոր իմ, —
Ձե Վոր քո հպարտ կրժքին ունեյիր փակցրած
Ինձ նման, անդուզական մի կիմ:

Հիմա յես գյուղումն եմ, նստած եմ տանը,
Որորում ե միաքս անցուղարձը գյուղի,
Յեվ շտապում եմ ավարտել նամակս...
Հիմա յես շտապում եմ կարևոր ժողովի:

Իրիկունն ե, վերադարձել եմ ժողովից,
Աշխատանքից ծանր, մտքերից հոգնած. —
Գրում եմ քեզ այս հանգավոր նամակը
Այն պահին, յերբ գյուղը լ՛րև ե ու նիրհած:

Կիսախավար ե ե իմ սենյակը...
Ու իմ գլխում հարցեր, մտքեր կան թանձր, —
Բայց հուզվում, լարվում եմ խինդից, Ռիմա,
Վոր ժպտում ե պատից, Ի՛լիչը քաղցր:

Այնքան հարազատ ե նա իմ հոգուն,
Այնպես սիրալիր, չնաշխարհիկ ընկեր. —
Միշտ խոսում ե ինձ հետ, զբուցում յերկար,
Այն պատկերից պատի, շրթունքներից իր դեռ:

Նա խորհուրդ տվեց, վոր քեզ նամակ գրեմ,
վոր միշտ լինենք քաղցր, բարեկամի նման. —
Ո՛ր, ծանր ե Ռիմա, աշխատել ամեն ուր,
Յեթե չունես ընկեր՝ մեր Իլիչի նման:

ատ եմ հուզվել Ռիմա...
Ուզում եմ գրել անվերջ, ստեղծագործել.
Մըրկում ե հոգիս, վոր դեռ քիչ բան գիտեմ:
Պետք է, Ռիմա, գիտուլթյան գրանիտը կրծել:

Պետք է գիշերներով յերկար նստել անքուն
Յեվ թերթել ու կարդալ, հատորներն Իլիչի.
Սրտից դեն շարտել սերն այդ «քաղքենի»:
Ո՛ր, զղշում եմ Ռիմա, որերն իմ պատանի...
.....
.....

Կարոտելեմ քեզ Ռիմա,
են կապուտ խալաթին քո, —
Շատ քաղցր ե ինձ համար
Քո խոհերի շեմքը,
վոր բացվել է զավուղի համերգի ներքո:

Շատ որեր են անցել ինչ գրել եմ նամակս,
Յեվ այսօր ընթերցում եմ քո պատասխանը. —
Պարզ տեսնում եմ տողերում քո հայացքը, Ռիմա,
Ու քո վառ աչքերում՝ համալսարանը:

Գրում ես թե արդեն դարձել ես ուսանող,
Թե քո յերեկոն նոր, նոր ե և գիտական.
Թե դազգյահից հետո, զըքի հատորներն են
Լարում քո միտքը թարմ և պատանեկական:

Գրում ես թե այն չե հիմա Յերեվանը,
Թե ասֆալտ մուշտակ ե հագել Աստաֆյանը:
Աստաֆյանը դարձել է կանաչ մի զարդուղի,
Մինչև նորք ե հասել արամվայ - յերկաթուղին:

Գրում ես թե ուրիշ, ուրիշ ե Յերևանը,
Թե ռեստորան ե դարձել հիմա «շաշլիկ խանը»,
Թե «ղանթարը» դարձել է ծաղկած հրապարակ
Թե այդ յերգն ե մի անգիր «ղանթար» - այլին
բալլադ:

Գրում ես թե փոխվել է քաղաքն այն հնորյա,
Յեվ վարպետներ հմուտ դեռ տոկում են ելի. —

Թե յինու՞մ են քաղաքում արևաշող շենքեր,
Յե՞վ փռվում նոր փողոցներ, մետաքսագործ խալի

Գրում ես թե աճել, ծաղկել են բարդինները,
Գրում ես թե մանյակ է դարձել Յերևանը,
Թե յերգում ե վորպես բազմակարկաչ վտակ
Պոեմներով իր նոր՝ Նայիրի Զարյանը:

Գրում ես թե լավ է հիմա Յերևանը,
Բայց շատ ես կարոտել աշխատելու գյուղում.—
Թե քո Չահել սրտում վառ է մի բորբ կրակ —
Կարոտել ես մեկին, բայց չգիտես թե ում:

Յերկար կարդացի յես քո նամակը, Ռիմա,
Քո գրիչը վարժ է, մտքերդ հասուն. —
Այնքան խինդ զգացի յես իմ հոգում նորից,
Քո խոսքերից խնդուն ու քո գրչից խոսուն:

Այն ինչ ժամ եր, բոպե, վոր հանդիպեցինք
Յե՞վ բաժանվեցինք նոր կորովով լցված. —
Ասացիր — «գնա գյուղ „հնգամյան“ մտքումդ»,
Թե Իլիչն ասել է. — «догматы и перегибать»:

Ո՛ր, կհասնենք, Ռիմա, կանցնենք նույնխակ —
Հինգ տարվա ապագան լարում է մկաններս.
Մոռացել ես միթե, վոր Իլիչի հետ եմ,
Վոր Իլիչն է ստուգում միշտ գործերս:

Հիմա բարձրացել է հարցը հրատապ,
Զտվում է Լենինյան մտքի մեքենան. —
Դու յե՞լ չես մոռացել, գրել ես այդ մասին
Յե՞վ գրել ես վորոշ, հաստատ ու վճռական:

Վորքան մեծանում ենք, թարմանում ենք, Ռիմա,
Ինչ լավ է մեր դարը, պայքարի վերելքում.
Մենք ենք հերոսները, Ռիմա, այդ պայքարի,
Վոր ձուլվել ենք ամուր, այդ պայքարի հոգում:

Կարոտել եմ քեզ, Ռիմա
Են կապույտ խալաթին քո.
Շատ քաղցր է ինձ համար
Քո խոճերի շեմքը,
Վոր բացվել է գավոդի համերգի ներքո:

* * *

Սեւմաշի հարվածախններին

Վառարանը թեժ է
Յեզ քոցերն ալրող,
Քո դազգյահի մոտ
Կանգնելը դժվար. —
Ջեռուցած ու շիկ
Ամեն մի յերկաթ,
Ամեն թռչող կայծ
Լավա յե վարար:

Յեզ խփում են հա,
Խփում մուրճերը,
Շուրջը դեմքերն են
Կրակի պես վառ —
Այդ գործն է աճում,
Թե շահնդ է լոկ,
Թե շեկ յերկաթն է
Գարարվում համառ:

Յեզ խփում են հա,
Խփում մուրճերը,
Շուրջը դեմքերն են
Կրակի պես վառ. —
Մուրճերի գարկը
Յեզ յեռանդը ձեր,
Նոր կյանքի համար
Պայքար է համառ:

Մուրճահար աղա,
Հնոցի վարպետ,
Ձեզ համար խաղ է
Այդ կրակը թեժ. —
Ձեր ուժգին գարկի
Ամեն մի թափից,

Մեր կյանքն ե կարող
Ստանում նոր տեսք:

Յեզ անհագացած
Վառարանը թեժ,
Ուր ելեկտրական
Բոցերն են յերգում,
Ձեր ջահել հոգին
Այդ համերգի մեջ,
Հարվածախուլթյան
Յերգն ե մրրկում:

Բոցերի խնջո՛ւյք
Յեզ հրե սեղան —
Յերկաթ լարերով
Հոսում ե գինին, —
Յեզ այդ սկիզբն ե
Այն ձոխ խնջույքի,
Ուր պատրաստվում ե
Արևի սինին:

Իմ հայացքի դիմաց,
Իմ յերկրի վրա,

Ձեր վարվուուն, ջահել
Սրտի բուռն յեռանդից,
Լայն դաշտերի վրա
Բացվեց մի նոր արեզ:

Յեզ իմ լիբիկական
Քնարը ջահել,
Ձեր անափ հույզերի
Յերգն ե համերգում,
Յեզ ձեր արևային
Սրտերը ջահել,
Իմ այս բորբ յերկրի
Յերգերն են յերգում:

Յեզ ծովն այս կատաղի,
Ալիքները հողմահար
Պայքարի յեն յելել
Ընդդեմ մեր նավի. —
Տեսնում եք թե ինչպես
Նրանք նահանջում են,
Ու սրտաբեկ մեռնում
Չհասած ափերին:

Յեզ արեզը վորպես
Կլոր շեկ մի սինի,

Են լազուրից վերին
Լուռ ժպտում ե մեզ —
Այն արեվից հրկեզ
Յեզ պոռտից ջահել,
Վողջույն հերոսներին,
Մաքառումին հրկեզ:

Յեզ իմ լիրիկական
Քնարը ջահել,
Ձեր անափ հույզերի
Յերգն ե համերգում,
Յեզ ձեր արևային
Սրտերը ջահել,
Իմ այս բոբբ յերկրի
Յերգերն են յերգում...

Յեզ արևը վորպես
Կլոր շեկ մի սինի,
Են լազուրից վերին
Լուռ ժպտում ե մեզ, —
Այն արևից կարմիր
Յեզ պոռտից ջահել,
Վողջույն հերոսներին,
Մաքառումին հրկեզ:

ՏԱՎԱՐԻՇՉ ՍԵՄՍՉ

Довольно жить законом,
Данным Адамом и Евой.
Ключу истории загоним,
Левой!

Левой!

Левой!

В. В. Маяковский

Левый марш (матросам)

1.

Բուրժույի յերկրում,
Թե յերկաթից բյուր լեռներ ցցվեն,
Բուրժույի յերկրում,
Թե ելեկտրոլամպը շանթե արփին,
Կամ թեկուզ վազեն դաշտերի վրա

Տրակտորներ բյուր
Յեզ հաղարախով, —
Դու կլինես միայն
Իմ այս յերկրի յերկաթին կարոտ,
Այնքան լայնանիստ դաշտերի համար,
Բուրժուայի յերկրի հաղար հերոսից
Հնգար անգամ լավ,
Տավարիչչ
Սեւաշ:

Յեզ այն մեջքերը կուռ,
Բազուկները ջլուտ,
Այն դեմքերը հպարտ
Մեր պայքարում տոկուն,
Այդ նրանք էյին, վոր
Հիմնադրեցին
Սեփական ձեռքերով —
Յերկաթից հյուսված
Հիմքերը քո:

Այդ նրանք էյին,
Իմ յերկրի մարդիկ...
Յեզ այդ նրանք են,
Իմ ընկերներն են,
Իմ ընկերներն են,

Իմ յերկրի մարդն է,
Մարդն է,
Մարդն է ջլուտ,
Վոր թիկունքով իր
Կոփված, հմուտ,
Քեզ վեր ե հանում,
Յեզ քո շիկացած
Բյուր յերախների
Կրակը խառնում:

Իմ յերկրի մարդն է,
Մարդն է,
Մարդն է ջլուտ,
Իմ ընկերներն են
Շունչ ավող կյանքին, —
Ջահել, ենտուզիաստ,
Վոր լեռները «կույս»,
Դաշտերը տափան,
Կառուցումների հրով են
Պառնել. —
Յեզ յես եմ, յես եմ,
Իմ յերկրով դեռ անտաշ, —
Տավարիչչ
Սեւաշ:

Յեզ հազար ու բյուր
Յերկաթե կոկորդ
Քո յերգն ե հիմա
Աշխարհին յերգում —
Յեզ անծիր ու լայն
Մեր այս յերկրի դաշտերի վրա,
Քո յերգն ե զնգում,
Քո յերգը հպարտ,
Քո յերգը հուզող,
Քո յերգը բազում:

Ու իմ նախրյան
Բազում յերկրի
Սեզ լեռների պես,
Աճում են ելի
Թափով ահռելի,
Հազար քեզ նման,
Քեզ պես աննման
Յերկաթե լեռներ:

Այն քո արեվավառ
Յերկաթ պատերի տակ,
Թաղեցինք հազար
Վիշտ, լաց ու տանջանք.

Հազար անքուն գիշեր,
Հազար յեզան արոր,
Իեւ մնացած հնից՝
Մեր ճամբին վոնց փշեր,
Այժմ դարձան հուշեր:

Բուշեվիկյան կամքի
Հզորակամ Սելմաշ...
Դու մեր անհաղթ հերոս,
Դու մեր հզոր վերելք,
Մասիսից ել հաստատ,
Հիմալայից խրոխտ...

II.

Դու յելնում ես թափով
Անահ,
Հազար ձեռքով դործած
Կանալ. —
Մեր դաշտերի համար
Հիմա,
Դու յելնում ես թափով
Անահ:

Քո յերգին են վազուց
Կարոտ,

Անծայրածիր դաշտերը
Մեր,
Քո յեւթին են վաղուց
Կարոտ,
Մեր յերկրում արա ու
Արոտ:

Փռված հեռու ու
Հեռավոր
Դաշտերը մեր վայրի,
Անմաշ. —
Քամին նրանց կասե
Որոք,
Քեզ են կարոտ, ընկեր
Սելմաշ:

Ու քո յերկաթ խոփը
Հիմի,
Մեր դաշտերում յերգ
Թող լինի. —
Եդ քո յերկաթ խոփը
Սելմաշ,
Արտերում մեր լինի
Անմաշ:

III.

Խաս գորգի պես փռված
Ծիրանագուռն դաշտեր, —
Իսկ հեռվում,
Փռվում են ելի դաշտեր...
Բայց ահա յեւնում են
Ու արշավում դաշտերը,
Վաշտեր —
Բայց ահա յեւնում են,
Արշավում դաշտերը
Մարդկային բանակներ,
Կառուցողներ անթիվ. —
Յեվ հազար գլուխներ
Ճգնում են հիմա
Դաշտերը շրջելու,
Կառուցելու առթիվ:

Մեկն արդեն գծում է իր բլուկնոտում,
Մյուսը գրում,
Մեկն արդեն քանդում է —
Տնքում է հողը
Յերկրի խորքում.
Մեկի մուրճիարվահիցծ
Հող է պառնում քարը,

Դինամիտի վորոտից
Ոգն ե յեղնում սարը...

Ահա
Ինժինների բլոկնոտում
Գծված մի լայն շրջան,
Շրջանների կանվա,
Կարկինով բոլորած
Բյուրավոր առուններ,
Խաչաձևող հիմքեր,
Աշտարակներ ցցուն. —
Բայց ահա,
Յեղնում ե մարդը
Յեզ հյուսում կանվան,
Ճեղքում յերկրի կուրծքը
Ու թաղում ցեմենտի
Յերկաթի լյարդը:

Նրանք գործում են,
Քրտնում,
Շաղախում ցեմենտը
Կարծես քրտինքով,
Վառ դեմքերին
Շողում ե յեռանդը,

Հեղեղվում ե դաշտը
Բազում հույզերով:

Յեզ ահա ցցվում են
Ամայի դաշտում՝
Պատեր...
Դռներ...
Աշտարակներ ցից:

Նավի խարխախի պես
Թաղվում են հիմքերը.
Աղյուսները փաթաթվում,
Չուլվում են իրար,
Յեզ դու բարձրանում ես,
Բարձրանում դաշտում,
Վոնց ահռելի մի սար:

— Հեյ, տղերք ջան,
Թե տվեք, շուռ տվեք հողը,
Թող վողջ յերկիրն զգա
Ձեր զարկերի դողը:

Իմ յերգը ձեր յերգն ե
Ձեր յերգը իմ հոգին. —

Իմ յերգը ձեր վերելքն է,
Իմ յերգը սրտագին:

Յես պոես մի ջահել,
Յեվ յերգում եմ իմ ջահել
Ընկերների հեքը. —
Յես յեկել եմ հիմա,
Ինձ բերել ե այստեղ,
Ձեր լեռ կամքն ամուր
Յեվ ձեր համառ յելքը:

Աշխատանքով տոգորված
Անափ ծով ե մեր հոգին,
Ծով հույզերով վողողված
Մենք յերգում ենք անմեկին:

Ո՛ր, տոկուն ե մեր հոգին
Յեվ պայքարի գնդակ. —
Յերգիր պոես, յերգիր
Պայքար ու հաղթանակ:

— Հէյ, տղերք ջան
Թև տվեք, շուռ տվեք հողը,
Թող վողջ յերկիրն զգա,
Մեր պարկերի զողը:

ԱՐՏԵՐԻ ԼԻՐԻԿԱՆ

* * *

Վորպես հաղթական կարմիր դրոշ,
Փողփողն յերկիր, հասուն բերքի —
Այս հաղթանակը հաստատ, վորոշ,
Դասակարգը թող հպարտ յերգի:

ՅԵՐԳ ԱՐՏԵՐԻ ՈՒ «ԻՍ» ՄԱՍԻՆ

Իմ ջահել պոետի
Ջանասեր բարեք,
Վոնց կարմիր արեք
Կանաչ ծիլերին. —
Յեվ պոետական
Բուռն վողջույն, յեղնող
կարմիր-վարդերին,
Վոսկե արտերին:

Հանդեր ջան, արտեր ջան,
Իմ ջեյրան ու ջիվան
Ծով արտեր սովեաթ. —
Ինչ բեջար և ուզում
Գովքը ձեր ծով սրտի
Հորդ մի գնգան Ջանգու,
Թե անձրև մի առատ,
Վոր ձեր ցողուն ու հասկ
Շորորան ծովի պես,
Յերգով գովեմ յես ձեզ:
Վոր ձեր յերգը սուլի
Մեզմիկ գեփյուռի պես. —
Վոր ձեր շարքը յեղնի,
Փովի, գարկի վրան
Մեր գաշտերի վրա:
Առավոտյան ժպտան
Արտերը խաս խալի —
Յեվ շնգ-շնգան թեթև
Ու որորեն կրկին
Շեկ-սաթ հասկերը լի:
Հասկերը նուռ, նարինջ,
Գլուխները շեկ-շեկ
Վոնց հնոցի բոցեր,
Իմ յերգի պես զվարդ

ԿՆՁԻ ՅԵՐԳԸ

Հնդամյակի հնձփորներին,
Կոլխոզային սաթ արտերին
Արևակեղ. —

Մրձադիզված ավտո քշող
Են ջան, ջահել, շոֆեր աղին,
Վողջնւյն, վողջնւյն

Արևը հուր
Ձերմ անձրևեց դաշտի վրա,
Ծիւր յերավ ու բոյ քաշեց
Ջահել ջիվան. —

Հասկը փայլեց,
Ճավայական սաթի նման,
Արտերը շեկ, դաշտում զարկին՝
Վոսկե վրան:

Որը բացվեց
Կաթնաշաղաղ շուշանի պես,
Արևն յերավ
Հորանջելով լերան ծերպեց,
Շոֆեր աղի
Դեմքից մի բուռ քրտինք թափեց՝
Ավտոն սուրեց ու սլացավ,
Շեկ արտերի վոսկե ափից:

Արտերը մեղմ
Բազմակոճակ շորորացին,
Ջեփյուռը մեղմ, քնքշորեն
Հասկը շոյեց —
Արտում լոեց
Ճպուռների յերգը տաղաուկ,
Յեվ շոփնդը հնձիչների
Հասկն համբուրեց:

Մի շեկ աղջիկ
Գլխին կարմիր լաշակ կապած,

Ամուր նստած արակտորի
Յերկաթ ուսին —

Այտերը վառ

Մի փունջ բացված վարդի նման,
Հոնքերը կեռ, վոնց գիշերվա
Կիսալուսին: —

Եդ աղջկա հայացքը վոնց

Մի սուր սվին,

Աչքերը վառ

Կարծես մի զույգ արև լինի:

Ծիրանագուռն արտում,

Ցցած կուրծքը խայթող,

Տրակտորի ղեկը գրկած

Ձեռքերի մեջ,

Փողփողում է արտում վորպես

Դրոշ հաղթող:

Եդ աղջկա

Միրաը վորպես մի թեժ քուրա,

Ծով արտերի ծոցում կարծես

Մի վարդ լինի —

Ենպես անսուշ,

Քաղցր ձենով յերգ է ասում,

Վոնց վոր կասես

Հազարաթեղ Սայաթ-Նովի
Սազն է խոսում:

«...Եյ, հնձվոր տղա

Քշիր մաշինդ շուտ,

Յեվ սուր սրիք

Հնձող մանգաղներիդ

Շուրթը. —

Քանի դեռ ամառ է,

Դեռ արև է ու շոգ,

Քանի դեռ չի փչել

Անձրևաբեր ցուրտը:

Մաշինդ դեսն արա

Մի ես արտը մտի,

Սրտանց ուժ տուր նորից

Եդ ջահել ձեռներիդ, —

Նայի՛ր, յեռ ես մնացել

Մաշինների շարքից,

Յեռ ես մնացել

Շարքից հարվածալինների:

Մաշինդ դեսն արա

Մի ես արտը մտի,

Բարաքյաթին ղուրբան
Եդ ջահել ձեռներիդ»:

Ու յերգն եդ աղջկա
Զընգոցով ու զիւ
Արաից արտ ե թռչում
Քամու թևին թառած,
Յեզ մաշինն ել նրա
Արաից արտ ե մտնում,
Որվա հաղթանակի
Առաջնությունն առած...

Իրիկունն ե արդեն
Դանդաղ, լճու մոտենում —
Արևը թեքվել ե,
Գլորվում ե տուն,—
Են աղջկա յերգը
Անափ դաշտերի
Վոսկեղոծ գրկում
Զնգում ե դեռ զվարդ:
Կարծես այգերաց ե
Յեզ վոչ թե իրիկուն:

ՆԵՐԲՈՂ ՀՆՁՎՈՐ ԱՂՋԿԱՆ

Արևակեզ աղջիկ, սիրում եմ քեզ,
Քո բազուկները պիրկ ու ճկուն,
Քո այտերը վոնց բացված վարդեր,
Զահել հասակը քո այդպես տոկուն:

Արևի շողավառ աղջիկ,
Արևի ցողավառ աղջիկ,
Արտերի յերգ ու կարոտ,
Կուխտզի հնձվոր աղջիկ:

Արևակեզ աղջիկ, սիրում եմ քեզ,
Մեր ծով արտերում դու բացված վարդ:
Քո հայացքը բոբբ, վորպես քուրա,
Քաղցր ժպիտը քո այդպես զվարդ:

Յես անցա քո արտի մոտով,
Քո յերգը վոնց կարմիր գինի. —
Նոր որվա համով ու հոտով,
Քո յերգն եմ յես սիրում հիմի:

Արևակեզ աղջիկ, սիրում եմ քեզ,
Անուշ յերգերը քո վորպես գեփյուռ. —
Պայծառ յերեկոն քո խնդաշաղաղ,
Կյանքը քո վորպես հասուն մի նուռ:

Արևի լուսավառ աղջիկ,
Արևի շողագարդ աղջիկ.
Լճի պես քո բիլ աչքերում,
Բերքի յերգ, խինդ տեսա, աղջիկ:

Արևակեզ աղջիկ, սիրում եմ քեզ,
Միրով անասհման, կամքով վորոշ. —
Դու մեր արտերում վառ արշալույս,
Փողփողուն՝ վորպես կարմիր դրոշ:

Քո յերգը վոնց հասուն մի հասկ,
Ես տարվա բերքի պես հարուստ —
Թափը քո վոնց անկանգ մի վազք,
Յերգը քո յերկաթե դալուստ:

Արևակեզ աղջիկ, սիրում եմ քեզ
Քո բազուկները պիրկ ու ճկուն.
Քո այտերը վոնց բացված վարդեր,
Ջահել կյանքը քո անիրիկուն:

Արևի շողավառ աղջիկ,
Արևի ցողավառ աղջիկ,
Սրտերի յերգ ու կարոտ,
Կոլխոզի հնձվոր աղջիկ:

ՂԱՓԱԾՈՆ ՏԱՆԵՐԳ ՌԻՆԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ

(Առաջին վարյան)

Նա ունեւր մի զույգ այծ
Յեզ մի քոսոտ յեզ,
Միշտ խալխի զոներում,
Միշտ հացի կարոտ:
Են յերաշտի տարին
Յեզը ծախեց կերավ,
Յերաշտն այծերին ել
Յեզի ճամբով տարավ:

Յերբ վոր կյանքը փոխվեց
Գյուղը դարձավ կոլխոզ,
Նա մտավ կոլխոզ
Անայծ ու անխորոզ:
Ճիշտ աշխատեց մարդը,
Գրախնք թափեց հալալ,
Յեզ վաստակեց մի կյանք,
Աղբյուրի պես զուլալ:
Հիմա ունի և՛ կով
Յեզ շքեզ քարետուն,
Չի պահասում յերբեք
Նրա տանից կաթն ու ձուն:
Նրա տանը մահճակալ՝
Արծաթի պես փայլուն —
Ուր առնում է հանդիստ
Գուն, ու չի կծում լուն:
Նրա տանը հիմի
Պահարան կա գրքի —
Նրա սեղանի վրա
Գաղցրավենիք մրգի:
Ճիշտ աշխատեց մարդը,
Գրախնք թափեց հալալ,
Յեզ վաստակեց մի կյանք
Աղբյուրի պես զուլալ:

ԲՐԻԳԱԴԻ ՅԵՐԳԸ

I.

Յեվ յե՞րբ ե արշալույսը,
Մայրամուտը յե՞րբ,
Հազար հուր հույզերով
Բեռնված որն ե թռչում
Այրոյի պես թեթև:
Կարծես կրճատել ենք
Յեվ գիշերը նիրհող,
Վոր լույսի պես թռչենք,
Ու չմնանք հետև:

Յեվ արևի այբող
Սուրձ-խուրձ մազերի պես,
Հունձի դեզերն են
Ծածկել կալը. —
Վոնց ավտոյի կրծքում
Շաչող մոտորը թեժ,
Հնձի մեջ թաղել են
Կալսիչ մաշինը:

Այս յերգը յերգել են
Թեկուզ պոետներ բոլոր,
Այս յերգը յերգել են
Թեկուզ պոետներ շատ,
Բայց այդ յերգերից
Շատերն են յեղել
Աշնան պես դալուկ,
Յեվ լալկան ու վատ:

Իսկ յես ու իմ յերգը
Ճգնավոր չենք յերբեք,
Հուսալքված կյանքից
Մոլար ու մաղձոտ. —
Մենք լսնդությամբ յելանք
Պայքարի հորիզոն,

Թաղելու բյուր պոետներ,
Լալկան ու թախծոտ:

Իմ յերգը պայքարում
Անհաղթ սուր սվինն է՝
Խնդառատ հուզում
Հաղթանակի բերք. —
Արտերում իմ յերգը
Ցեռանդ ու ավյունն է,
Շեկ արտերը հնձող
Հարվածային ձեռք:

Յեզ յերբ ե արշալուսյւր,
Մայրամուտը յերբ,
Հազար հուր հուլզերով
Բեռնված որնն է թռչում
Այրոյի պես թեթև. —
Կարծես կրճատել ենք
Յեզ գիշերը նիրհող,
Վոր լույսի պես թռչենք
Ու չմնանք հետև...

Ե՛... Եխ, կուրծքդ այնպես
Ուտչում ե յեռանդից,

Միրադ այնպես քաղցր
Մի կարոտ ե առնում,
Վոր պայքարով լցված
Մեր որերի ճամբում,
Այսպես անեղ թափով
Բյուր գործեր են դառնում:

Ձան, ենտուզիաստ ջանել,
Բրիգադիր տղա,
Քո յեռանդոտ թափին
Ո՞վ կղիմանա: —
Սոց-մրցման արշավում
Հաղթող, հպարտ տղա,
Մեր պայքարում անհաղթ,
Հարվածային տղա:

Յեզ խնդում ե բրիգադը
Առավոտյան շնչով,
Յեզ բեռնած կալսիչը
Հոնդում ե հպարտ: —
Կյանք կա, կյանք կա,
Խինդ կա մեր բրիգադում,
Յեզ յեռանդուն գործ,
Հույս կա անվհատ:

II.

Հէյ, փետուրյա շլապավոր
 Դեղին պրոֆեսոր,
 Գրչավաճառ քննադատ. —
 Իմ այս յերգը, գիտեմ,
 Քեզ դուր չի գա,
 Իմ այս յերգը կեսոցի
 Քո ուղեղը քոսոսա...

Մենք ծաղկում ենք, աճում,
 Բոյ ենք քաշում չինար:
 Մենք կռում ենք կամքը
 Հրավառ աշխարհի:
 Կառուցում ենք ելի,
 Կառուցում ենք անթիվ...
 Յեվ մատնելով հրին
 Ձեր ճիգերը վայրագ, —
 Մենք աճում ենք ելի
 Ու սլանում արագ:

ԽԱՌԸ ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* * *

Я люблю вас,
но живого,
а не мумию.
В. В. Маяковский

Վորպես նվեր յերկու կարմիր նուան հատ,
Յես դեռ մանուկ քեզ գրեցի յերկու տող.—
Յեզ պարուրված քո յերգերով անվհատ,
Բո հետեից ձամբա յելա սրտագող:

Վորպես արուբադուր ջլուա դասակարգի
Անշեջ լապտերի պես մի հուր խավարում.—
Բճբ յերգերով, սուր սուսերով անցկացար,
Մըրկախոս գոռ պայքարի դիրքերում:

Յես արթնացա քո յերգերից պայծառախոս,
Յես վեր յերա խանձարուրից մանկական.—
Քո ուղիով, հարբած քո վառ յերգերով,
Յես յերգեցի քո յերգերն առնական:¹

Յես յերգեցի քո յերգը պայծառատես
Յեվ իմ յերգը, ո՛ր, իմ ձայնը ուր գնաց.—
Լուսնաշաղախ գիշերային խավարում,
Յերգիդ քաղցր տաղն իմ հոգում վառ մնաց:

Յեվ յերգերով լուսապայծառ դու անցար,
Միրով հարբած... դեռ գուռնով դու անցար—
Անշեջ լապտերի պես մի հուր խավարում,
Զուռնեն քոքած, նաղարայով դու անցար:

Ճամբաներում թողիք պայծառակերտ յերգեր—
Յեվ պայծառապաշտոն դու անցար քո ուղին.—
Յեվ ատրաշեկ վերքեր քո ծնկների վրա—
Թողիք քնարդ նվեր գալիք յերգողներին:

Վորպես նվեր յերկու կարմիր նոսն հատ,
Յես դեռ մանուկ քեզ գրեցի յերկու տող.—
Յեվ պարուրված քո յերգերով անվհատ,
Քո հետևից ճամբա յերա սրտադող:

ՏԵՐՅԱՆ

Դեռ կգան որեր ավելի տրտում...
Տերյան

Որերն այն տրտում
Դարձել են անտուն:

Տրտում որերն անցան,
Վերադարձիր, պոետ.
Փոշիացան, չքացան
Ճամբաներում մեր արև:

Կաղկանձելով հեռվում ցուրտ
Վողորմելի մի ժամերգ,
Դժնի ձանձրույթ և արտունջ,
Անլույս չորցան անարեգ:

Տրտում որերն անցան,
Վերադարձիր, պոետ,
Վերադարձիր, վոր յերգես
Նոր վանկերով նոր սոնետ:

Տրտում որերն անցան,
Վերադարձիր, պոետ,
Յեւ գրիչդ նորից առ,
Յերգդ լինի թող վրան:—

Մեր շարքերից դու ընկար
Լուսբացին, պոետ,
Յեւ վաճեցիր քո սրտում
Վորքան անգիր սոնետ:

Վերադարձիր, պոետ, վերադարձիր,
Վառ արեւ և կյանքը, անխրիկուն:—
Վերադարձիր, պոետ, յերգիր ելի,
Որերն այն արտում դարձել են անտուն:

Վերադարձիր, պոետ,
Յերգդ թող լինի վրան:—
Սպասումի հուրը թեժ
Այրեց քո սիրտը, Տերյան:

Տրտում որերն անցան,
Վերադարձիր, պոետ,
Վերադարձիր, վոր յերգես
Նոր յերգերով նոր սոնետ:

Ձեր թափած արյան ամեն կաթիլը,
Սեզ բոյ ե քաշել հպարտ խոյանքով: —
Յերկրում մեր մեծ ու յերկաթավոր,
Յելել ե յերթի անմոռաց փառքով:

Դուք կովով ընկաք,
Աննահանջ ընկաք. —
Ստեպներում հեռու՝
Հաղթանակով ընկաք:

Այնպես կենդանի, վառ ե մեր հոգում,
Ու ձեր հայացքը սվինից ել սուք. —
Ինչպես հաղթարար առավոտն այն,
Ինչպես արեւ իր շողերով վառ:

Դուք կովով ընկաք,
Աննահանջ ընկաք,
Ստեպներում հեռու՝
Հաղթանակով ընկաք:

Այսոր ձեր տոնին, հին հուշերը վառ,
Անցյալը հեռու, գիշերները մութ. —
Դիակարգերը ձեր անձեռագործ
Յեվ աշնանային հորիզոնը լուրթ:

ՉԵՐԳ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ձեր թափած արյան ամեն կաթիլը,
Հանուն պայքարի ու ազատության, —
Ծլել ե ինչպես հատիկն ե ծլում,
Փողփողում ե վոնց զրոշ հաղթության:

Դուք անվախ ընկաք,
Դուք անմահ ընկաք,
Անհավանաբար կովում
Հաղթանակով ընկաք:

Դուք մարտական ընկաք,
Արնաշաղախ ընկաք,
Ստեպներում հեռու՝
Հաղթանակով ընկաք:

Մենք դերք փորեցինք ձեր դիերի մոտ,
Նորից կովի մտանք ձեր դիերի մոտ.—
Նորից կովի մտանք, նորից առաջ անցանք,
Յեզ հաղթություն սալանք մինչև առավոտ:

Դուք յերգերով ընկաք,
Ուռաներով ընկաք,
Ստեպներում հեռու՝
Հաղթանակով ընկաք:

Յերբ տոն ենք տոնում խնդությամբ առատ,
Չկարծեք լալիս կամ յերգում ենք սուգ.—
Մեր հոծ շարքերի դրոշների տակ,
Ո՛ր, հիմա քայլում եք մեզ հետ և դուք:

Դուք մարտական ընկաք,
Արնաշաղախ ընկաք.—
Ստեպներում հեռու՝
Հաղթանակով ընկաք:

Ո, հիմա քայլում եք մեզ հետ և դուք, —
Մեր հոծ շարքերի դրոշների տակ.—
Դուք, վոր կովի յելաք ու մեռաք պատվով,
Այն աննահանջ կովում դարձաք նահատակ:

Յերբ տոն ենք տոնում
Խնդությամբ առատ,
Չեր հաղթանակի
Հաղար բարիքով՝

Կարծես ծաղկազարդ մայիս ե բացվեկ
Ո՛ր, ջահել ենք մենք ձեր անմահ փառքով:

ՅԵՐԳ ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿԻՆ

Վոր արթուն լինես ու մնաս արի
Յե. Չարեմց

Արիացիք ընկեր,
Սիրտդ թող ջահ լինի,
Սիրտդ թող ջահ լինի
Մեր ես ճամբի վրա, —
Քայլիք դու համարձակ
Հաղթանակի ճամբան,
Յե՛վ սուր սվինդ հուր
Թող գործի անահ:

Մենք առել ենք լեռը
Կովով, հաղթանակով —

Կառուցել ենք հաստատ
Գալիքի մեծ ճամբան:
Ով կվորձի սողալ
Մեր մեծ ճամբի վրա,
Այն ժամ սվինդ սուր
Թող գործի անահ:

Այժմ, յերբ հաղթական
Մենք քայլում ենք ելի,
Մեր թշնամին բուրժույ
Լարում ե նոր դավեր:
Դարձել ե փոթորկոտ
Ովկիանոսը խաղաղ,
Պատրաստ յեղիր, ընկեր,
Անհաղթ ու անվեհեր:

Արիացիք ընկեր,
Սիրտդ թող ջահ լինի,
Սիրտդ թող ջահ լինի
Մեր ես ճամբի վրա:

Քայլիք դու համարձակ
Հաղթանակի ճամբան,
Յե՛վ սուր սվինդ հուր
Թող գործի անահ:

ՂԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՅՈՒՄ
ԸՆԿԱԾ ՄԻ ՇԵՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Ախ են զազախ տղեն
Գլխին պոպոզ գգակ,
Գլխին պոպոզ գգակ,
Թևին կարմիր մի լաթ:
Կարկուտի պես գնդակ
Տեղաց նրա վրա...
Բայց նա դեռ կովում էր
Դիրքում մենակ, անաս:

Մանուկ որվանից իմ
Հիշում յեմ ես տղին,
Մեր յերկերը յեկավ
Դոնի լայն դաշտերից:
Յեկել էր, վոր կովի,
Ոգնի մեզ մեր կովում,
Մեր կովում մեծ, անհաղթ,
Բանվորի, գյուղացու,
Վոր չարորի մեզ
Կրունկն անգլխացու:

Ախ, են զազախ տղեն,
Գլխին պոպոզ գգակ:
Կապուտաչյա տղեն,
Թևին կարմիր մի լաթ:
Գնդացիներից իր թեժ
Տրա, տա, տա, տա,
Թեժ կրակ էր մազում
Վոստիների վրա:

Բանաքեռի են մերկ
Փշոտ սարի լանջում,
Մենակ մնաց դիրքում
Հերոսն այն քաջարի:

Բայց կովում եր ելի,
Գիտեր վոր մահ ե այդ,
Վոր բուրժույը նորից
Յերկերը չաիրի:

Վաստիների մի խումբ
Լանջիցը գաղտագողի,
Սպանեցին դիրքի մեջ
Հերոսին այն արի:
Ախ են դազախ տղեն,
Գլխին պոպոզ գլակ,
Կապուտաշյա տղեն,
Թևին կարմիր մի լաթ:

ՓՈՔՐԻԿ ԶՈՆՍԸ

(Ավստրիական ապստամբ բանվորներին 1934 թ.)

Արդեն լուսադեմ եր...
Իսկ Զոնսը դեռ մենակ
Մեկնած հատակին,
Վերջին տառն եր ներկում
Վաշտի դրոշակին:

Գիշերն այս յերկար եր տեել,
Վոնց վոր անսովոր ճամբա.
Գիշերն այս կրակ եր մաղել
Բանվորի ապստամբ կամբին:

Գիշերն այս թունոտ մի դաշուչն,
Արյունոտ ձեռքերում ֆաշխատ,
Բացել եր անբուժ վերքեր,
Վերքեր բանվորի կրծքին:

Արդեն լուսադեմ եր...
Իսկ Ջոնսը դեռ մենակ
Մեկնած հատակին,
Վերջին տառն եր ներկում
Վաշտի գրոշակին:

Գիշերն այս յերկար ե տևել,
Անգուլթ գրշերն այս արնաշաղ. —
Դեռ մատղաշ մի դուչյ աչքերից
Խլել եր և հանդիսա, և որոր —
Ջրկել եր քնից:

Չեր քնել Ջոնսը...
Վաշտի վորոշումն եր այդ,
Վոր մինչև լուսադեմ,
Մինչ արևածագը,
Պատրաստ պետք ե լիներ
Վաշտի գրոշակը:
Պարզ հիշում եր նա յերեկվան որը
Յեկ վորոշումն այն,

Յեկ պիտներական անխախտ խոստումը
«Դասագուլը», ցույց:
Անգամ մտնել բարեգադ,
Յեթե կարիք լինի այդ:

Արդեն լուսադեմ եր...
Իսկ Ջոնսը դեռ մենակ
Մեկնած հատակին,
Վերջին տառն եր ներկում
Վաշտի գրոշակին:

Ծնողները Ջոնսի
Վողջ գիշերը գրսում —
Վողջ գիշերը գրսում,
Բարեգադի վրա:
Իսկ փոքրիկ Ջոնսի
Թիթեռիկ սրտում
Բաբախում ե խինդը
Յեկ գալիքը վաղվա:

Առավոտ լուսադեմին,
Հանկարծ դուռը թակեցին —
Ջոնսը յելավ դուռը բացի
Հպարտանքով առնական. —

Մակայն շենքում
Հայրը ճոճվեց ու ընկավ,
Դեմքը քաթան,
Արդեն յեղած արնաքամ:

Նրա կրծքին, վարդանման մի վերք կար՝
Բացված թունոտ գնդակներից թշնամու. —
Մի հրացան ամուր գրկած ձեռքերում,
Կարծես նոր եր ուզում գնալ կովելու:

Մայր ու վորդի լուռ քարացած մնացին.
Արցունք չկար նրանց ծարավ աչքերում:
Ջոնսը համբուրեց հոր արնաքամ շուրթերը
Մեծի նման, և սիրտ ավեց մայրիկին:
Վեր առնելով հոր այրուճոտ դենքերը
Յեվ դռոշը, վոր պրել եր վողջ գիշեր՝
Թռավ դեպի վաշտը վաղուց սպասող:
Անհետացավ փողոցներում արնաշաղ,
Թռավ դեպի բարիզապը կովելու,
Յեվ արնաքամ հոր վրեժը հանելու:

Մայրը նետվեց փոքրիկ վորդու հետևից,
Վոր հեա բերի, փրկի մահի ճանկերից.
Վոր խնամի գալիք պայքարի համար,
Վոր գալու յե կրկին, վերստին ու նորից:

ՄԱՅՐԻԿԻՍ

I.

...Յեվ քայլում եր Աստաֆյան փողոցով,
Կորացած մեջքով, պառաված մի կին. —
Կարծես կենդանի մի դիակ լիներ՝
Փոքրիկ մի դիակ ել իր կոր շալակին:

Նա քայլում եր Աստաֆյան փողոցով
Կիսամերկ, կեղտոտ և դին շալակին. —
Իր վոսկրացած ձեռքերը նա հաճախ
Մեկնում եր անցնող ամեն մեկին...

— Բալաս մեռնում ե, աղա, մի կտոր հաց...
Հազիվ լսելի ձայնով խլացած,
Գլուխն ամոթից խոնարհած գետին,
Վողորմություն եր մրմնջում կամաց...

Որն ի բուն այդպես, փողոցից-փողոց
Մի կտոր չոր հաց մուրալու համար,
Մայր իմ թանկագին, վորքան անպատկառ
Խոսք, հայհոյանք ես կրել անհամար:

Վասկրացած ու մերկ քո անշուք դրկում
Իմ մանկությունն ե ոթևան գտել,
Ծեր ու դալկացած քո կյանքի պահին,
Մանուկ որով ես կյանքի մեջ մտել:

Անցյալն այդ հեռու, վորպես շոգենավ,
Խարիսխ ե պցել իմ սրտի ծովում—
Յեվ հոգիս հիմա, վոնց մրկահավ,
Ճախրում ե այդ դառն հուշերի հովում:

...Հիշում եմ, ինչպես «թուրքի» շուկայում
Հարբած դուքանչիք վրա թափվեցին՝
Վարունգի կեղև ժողովելու համար,
Մորս ցեխի մեջ վոաքով տրորեցին:

Մի ջահել աղա, պիրկ բազուկներով,
Աչքերին քաշած մազութոտ կեպին,
Յեթե նա չոգներ իր բռնուցքներով,
Մայրս ցեխի պես կկպչեր գետնին:

Յերբ մորս մի կերպ մենք տուն բերեցինք,
Արդեն մոռացած քաղց, ակարություն,
Նույն վիճակումս ել մորս թողնելով,
Յես կյանք դուրս յեկա հենց այդ իրիկուն...

.....

...Յեվ յերբ մոտեցա խրճիթի դռան
Ու վերջին ուժով դուռը բացեցի,
Այնքան եմ հիշում, վոր դռների մոտ
Մորս հետեյալ խոսքերն ասացի. —

— Մերը մայրական վորպես ատրուշան
Իմ հոգու խորքում թող անմար մնա—
Յեվ տանջանքը քո, վորպես լույս փարոս,
Մայր, թող միշտ վառվի իմ ճամբի վրա:

Յեթե իմ ճամբում դժվարին ու ցուրտ,
Զժպտա ինձ և յոչ մի ծաղիկ,

Մայր, հաստատ գիտցիր, հորիզոնում լուրթ
Կլավովի մեր մեծ արեֆն անառիկ:

Այդ փոշոտ կյանքի ցուրտ վերմակի տակ
Գիտեմ, վոր դու ինձ կսպասես կրկին.
Քո կյանքը վորպես մի անշեջ կրակ,
Քնքուշ գգվանքով կկարոտի մեկին:

II.

Տարիներն անցել ու հեռացել են,
Ո՛ր նրանք անցել են անվերադարձ —
Ո՛ր նրանք հեռացել ու անցել են,
Սրտումս թողել հեռավոր մի մաղձ:

III.

Հիմա դու անցել ու ծերացել ես...
Քո մեջ դեռ հին մի յերգ թափառում ե անսանձ. —
Ո՛ր, իզուր են հիմա քո խրատները,
Վոր յես լինեմ հեզիկ, վոր յես սիրեմ միշտ գանձ:

Հիմա դու անցել ու ծերացել ես...
Մոռացել ես կարծես հին որերդ մաշող. —
Հիմա դու անցել ու մոռացել ես
Տանջանքներդ դաժան, սիրող տաշող:

Գիշերներով անքուն մտածել ես յերկար,
Մաշել ես քեզ այրող սև թոնիրի շրթին.
Ողբ փոխարեն սև ծուխն ես միշտ շնչել
Վոր մարդ դուրս գա խելոք քո տարաբախտ
վորդին:

Յերբ գիշերը մեկ տեղ անկողին ենք մտել,
Յես նայել եմ թագուն կոշտ վերմակի տակից.
Տեսել եմ, լո՛ւռ ինչպես դու արցունք ես թափել
Քո այն միշտ սպասող ու անթարթ աչքերից:

Ո՛ր, հիմա դու անցել ու ծերացել ես...
Հին են խրատները քո, վորպես մաշված քաթան.
Ո՛ր, այժմ դու անցել ու մոռացել ես
Անցյալը հեռավոր, կյանքը մեր անվաթան:

Ո՛ր, հիմա դու անցել ու ծերացել ես...
Վարդաշող ես կյանքում, ուրիշ ե կյանքն իմ. —
Ո՛ր, տես վորքան աճել փարթամացել եմ յես
Ինչպես վարդ, կրճ.քիս շողում ե աստղաձև մի կիմ:

Հիմա դու անցել ու ծերացել ես...
Քո մեջ դեռ հին մի յերգ, թափառում ե անսանձ. —
Ո՛ր, հիմի իզուր են քո խրատները,
Վոր յես լինեմ հեզիկ, վոր յես սիրեմ միշտ գանձ

IV.

Տարիներն անցել ու հեռացել են,
 Ո՛ր, նրանք անցել են անվերադարձ. —
 Ո, նրանք հեռացել ու անցել են,
 Սրտումս թողել հեռավոր մի մտղձ:

ՀԵՂԿՈՄԸ

(Հասված)

Դաշնակցական ավանդու-
 ըրյում ընկած, Գանաքե-
 ուի առաջին հեղկոմ՝ Հակոբ
 Դաթոյանի հիշատակին:

Դեռ հիմա յեղ վորպես
 Մանկան մի ճոճանակ,
 Միտքս ուրորում և
 Հեռավոր մի հուշ. —
 Դեռ հիմա յեղ վորպես

Սուր մի պողպատ դանակ,
Միբոս ծակոտում ե
Հնւշն այդ փուշ:

Կարծես թե յերեկ եր,
Բայց յերեկն ել այդպես
Վառ չի իմ հոգում. —
Ուրիշ եր այն որը,
Այն որը կրակ ու
Արյուն եր թքում:

Յես դեռ մանուկ եյի,
Մանկան այդ հուշերը
Թարմ են շատ հիմա. —
Բայց շատ ջանել եր նա
Յեզ այն ջանել աչքերն
Իմ մեջ անմար կմնա:


Այդ մի յերեկո յեր,
Մոայլ մի յերեկո
Մահվան ու պայքարի. —
Են շիկահեր տղեն,
Կապտաշյա տղեն,
Դիրքում մնաց մենակ
Ու մեռավ արի:

Յես դեռ մանուկ եյի,
Մանկան այդ հուշերը
Թարմ են շատ հիմա. —
Ո՛ր, թանկագին ընկեր,
Ո սիրելի Հակոբ,
Կովի յերգը քո այն,
Իմ մեջ անմար կմնա:

...Իրեկունն իջավ մշուշոտ ու լուռ,
Մութը սողալով գյուղ մտավ թագուն.
Խոր ձորն իջավ արևն ամոթխած
Յեզ գյուղը մտավ սովորական քուն:
Յերկինքը սև քող քաշեց յերեսին
Գիշերը գյուղում կապեց գորշ վրան,
Խավարում կորան աստղեր ու լուսին
Յեզ ժխոր թափվեց հյուղերի վրա,
Խավարը խառնեց հանգիստը գյուղի,
Գյուղը խուճապեց, խառնարան դարձավ.
Ով անից յելավ փողոցն անցնի,
Այդպես ել գնաց՝ չվերադարձավ...

Գյուղում տենդ կար մի տեսակ,
 Վրնց վոր համաճարակ—
 Նենգ թշնամին գյուղում
 Մտել եր դարան:
 Եդ որն անսովոր եր
 Անց ու դարձը գյուղի,
 Վորոշել եր թշնամին
 Գյուղում կրակ մաղի:

Այ, հենց այդ գիշերն եր,
 Այդ գիշերն եր խավար,
 Այդ գիշերն եր դաժան,
 Վոր Հակոբին տարան...
 Այ հենց այդ գիշերն եր,
 Գիշերն այդ մահաժամ,
 Մեր հեղկոմին հերոս,
 Հանեցին կախաղան:



ՌՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Չոն — «Չեյնոսկինի» արշավախմբի փրկարար
 ստավառնորդներին 5

Յպիգրամ (զբբես) 7

Բեկոի հրամանատարը 8

Յերգ սրդղատես թոչուններին
 կառուցումների լիրիկա 10

Քնարերգու այց 15

Սովետական ութնյակներ 19

Ռիմա 21

* * * (Մեղմաշի հարվածայիններին) 28

Տավարիշ Սերմաշ 33

Արտերի լիրիկան 45

* * * 46

Յերգ արտերի ու «խմ» մասին 46

Հնձի յերգը 50

Ներքոց հնձվոր աղջկան 55

Չափածու տողերգ 58

Բրեղաղի յերգը 60

Խտար բանաստեղծություններ 67

* * * 69

Տերյան 69

Յերգ Հոկտեմբերյան նահատակներին 7

Յերգ կարմիր մարտիկին 76

Դաշնակցական ավանտյուրայում ընկած
 մի հերոսի մասին 78

Փոքրիկ Չոնսը 81

Մայրեկիս 85

Հեղկոմը (հատված) 91



Отв. редактор Г. А. Потенц Тех. ред. О. Тер-Давыдов
Корректор Т. Ахаян

Издание 636/4214 Объем 3 печ. листа, Статформат А6 105x148. Упол
крайлит 00-11401. Тираж 800 экз. Заказ 6246 дано в набор
29/XI-1934 г. Подписано в печать 2, I-1935 г.

Типография им. «Стачки 1902 года» АЧПТ в г. Ростове на Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0343538

ԳԻՆԸ 2 ԴՈՒՐ. 50 ԿՈՊ.
Цена 2 руб. 50 коп.

Ш 1 39375

На армянском языке

26 ФЕВ 1955

АРСЕН ОГАНЕСЯН
ЛИРИКА РАССВЕТА

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ ИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳԱԿԵՍՏԸ

ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅՈՒ ՓՈՂ. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՆԳՐՈՅԵՆՏՐ)